# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2021թվականի N 3

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2021թվականի փետրվարի 26-ի հերթական նիստի օրակարգը.

1. Համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2020 թվականի բյուջեի կատարման մասին :

2. Համայնքի 2021 թվականի բյուջեում վերաբաշխում, համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 15-ի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ կողմ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ կողմ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ կողմ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ կողմ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԴԻՄԻՏՐՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *04200683*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2021 թվականի N 4

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Դիմիտրով համայնքի ղեկավարի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

Հավելված
Դիմիտրով համայնքի
ավագանու 26. 02. 2021 թվականի
N 4 որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

## ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ.

2020թ. բյուջեի սեփական եկամուտները, որոնք կազմում են տարեկան 10264.0 հազ. դրամ, մուտքագրվել է 8009.5 հազ. դրամ, այսինքն կատարողականը տարեկանի նկատմամբ 78 տոկոս: Ըստ առանձին հարկատեսակների եկամուտները կազմել են`

ա/ հողի հարկ - պլան 3500.0 հազ. դրամ, մուտքագրվել է 2598.1 հազ. դրամ կամ 74.2 տոկոս.

բ/ գույքահարկ – պլան 4431.0 հազ. դրամ, մուտքագրվել է 3937.6 հազ. դրամ կամ 88.9 տոկոս.

գ/ տեղական տուրք – պլան 285.0 հազ. դրամ, մուտքագրվել է 291.8 հազ. դրամ կամ 102.4 տոկոս.

դ/ գույքի վարձակալություն – պլան 329.0 հազ. դրամ, մուտքագրվել է 143.0 հազ. դրամ կամ 43.5 տոկոս.

ե/ տեղական վճար _ պլան 1719.0 հազ. դրամ, մուտքագրվել է 1038.9 հազ. դրամ կամ 60.4 տոկոս:

Դոտացիա պետբյուջեից – 27695.6 հազ. դրամ:
Սուբվենցիա կապիտալ ծախսերի – 2557.1 հազ. դրամ:

## ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ.

1. Կառավարման մարմնի պահպանում`

Աշխատավարձ- պլան 23226.4 հազ. դրամ, փաստացի 21425.5 հազ. դրամ.
Էներգետիկ ծառայություն – պլան 711.0 հազ. դրամ, փաստացի 673.8 հազ. դրամ.
Կոմունալ ծառայություն - պլան 0.5 հազ. դրամ, փաստացի 0.24 հազ. դրամ.
Կապի ծառայություն - պլան 72.0 հազ. դրամ, փաստացի 0 հազ. դրամ.
Ապահովագրական ծախսեր - պլան 36.0 հազ. դրամ, փաստացի 36.0 հազ. դրամ.
Ներքին գործուղումներ - պլան 10.0 հազ. դրամ, փաստացի 0.0 հազ. դրամ.
Համակարգչային ծառայություններ - պլան 115.0 հազ. դրամ, փաստացի 112.8 հազ. դրամ.
Տեղեկատվական ծառայություններ - պլան 67.0 հազ. դրամ, փաստացի 59.0 հազ. դրամ.
Մասնագիտական ծառայություններ - պլան 150.0 հազ. դրամ, փաստացի 30.0 հազ. դրամ.
Մեքենայի ընթացիկ նորոգում - պլան 350.0 հազ. դրամ, փաստացի 255.1 հազ. դրամ.
Գրասենյակային նյութեր - պլան 400.0 հազ. դրամ, փաստացի 357.65 հազ. դրամ.
Տրանսպորտային նյութեր - պլան 1000.0 հազ. դրամ, փաստացի 950.0 հազ. դրամ.
Պարտադիր վճարներ-պլան 10.5 հազ. դրամ, փաստացի 0 հազ. դրամ.
Գեոդեզիական և քարտեզագրական ծախսեր-պլան 250.0 հազ. դրամ, փաստացի 250.0 հազ. դրամ.

2. Աղբահանություն և սանիտարական մաքրում`
Կոմունալ ծառայություն - պլան 2524.0 հազ. դրամ, փաստացի 2524.0 հազ. դրամ.

3. Սոց. անապահով անձանց աջակցություն`
Այլ նպաստներ –պլան 1075.0 հազ. դրամ, փաստացի 1075.0 հազ. դրամ.

Կենցաղային և հանրային սննդի նյութեր – պլան 50.711 հազ. դրամ, փաստացի 50.711 հազ. դրամ.

4.Հասարակական կազմակերպություններին աջակցություն՝
Նվիրատվություն այլ շահույթ չհետ. կազմ. - պլան 20.0 հազ. դրամ, փաստացի 0 հազ. դրամ.

5.Մշակութային միջոցառումներ՝
Աշխատավարձ – պլան 1190.0 հազ. դրամ, փաստացի 1155.8 հազ. դրամ:

6.Կրթություն այլ դասերին չպատկանող՝
Գրենական նյութեր- պլան 50.0 հազ. դրամ, փաստացի 0 հազ. դրամ:
Այլ ընթացիկ դրամաշնորհներ - պլան 100.0 հազ. դրամ, փաստացի 0.0 հազ. դրամ:

7.Արտաքին լուսավորության ցանցի շահագործում՝
Էներգետիկ ծառայություն-պլան 690.0 հազ. դրամ, փաստացի 563.0 հազ. դրամ:

8. Նախադպրոցական ուսուցում՝
Ընդհանուր բնույթի այլ ծառայություն- պլան 2180.5 հազ. դրամ, փաստացի 2082.8 հազ դրամ:

9. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում
Նախագծահետազոտական ծախսեր-- պլան 610.0 հազ. դրամ, փաստացի 610.0 հազ դրամ:
Շենքերի և շին. կապիտալ նոր. - պլան 1792.0 հազ. դրամ, փաստացի 1791.94 հազ. դրամ:

10. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ - պլան 150.0 հազ. դրամ, փաստացի 0.0 հազ. դրամ:
Նախագծահետազոտական ծախսեր - պլան 360.0 հազ. դրամ, փաստացի 360.0 հազ. Դրամ
Շենքերի և շին. կապիտալ նոր. - պլան 14674.3 հազ. դրամ, փաստացի 14673.6 հազ. դրամ

11. Գրադարանային ծառայություններ
Աշխատավարձ- պլան 1190.0 հազ. դրամ, փաստացի 1170.0 հազ. դրամ.

12. Առողջապահություն այլ դասերի չպատկանող
Այլ ընթացիկ դրամաշնորհներ - պլան 100.0 հազ. դրամ, փաստացի 0.0 հազ. դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝
Վարչական բյուջե - պլան 35468.6 հազ. դրամ, փաստացի 35012.4 հազ. դրամ կամ 98.7 տոկոս:
Ֆոնդային բյուջե- պլան 17686.28 հազ. դրամ, փաստացի 17685.51 հազ. դրամ կամ 99.9 տոկոս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Իոնանով

*04200683*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 փետրվարի 2021թվականի N 5-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ համայնքի ավագանին որոշում է.

Համայնքի 2021 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու նպատակով համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 15-ի <<Դիմիտրով համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 2-Ն որոշման հավելված 2-ում և հավելված 3-ում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Վարչական բյուջեի ծախսային մասի պահուստային միջոցներ հոդվածից պակասեցնել 1100000(մեկ միլիոն մեկ հարյուր հազար) դրամ.

1) ոլորտներ սյունյակի 11 01 02 51 տողի պահուստային միջոցներ 4891 սյունյակի <<5481.3>> թվի փոխարեն կարդալ <<4381.3>> թիվը: Ընդամենը տողում՝<<5481.3>> թվի փոխարեն կարդալ <<4381.3>> թիվը,

2) ընդամենը սյունյակում <<24635.0>> և <<5481.3>> թվերի փոխարեն համապատասխանաբար կարդալ << 24735.0>>և <<5481.3>> թվերը:

2. Վարչական բյուջեի ծախսային մասի պահուստային միջոցներ հոդվածից պահասեցրած 1100000(մեկ միլիոն մեկ հարյուր հազար) դրամը բաշխել հետևյալ կերպ.

1) աղյուսակում ավելացնել սյունյակ 4269 հոդված՝ հատուկ նպատակային այլ նյութեր անվանումով, ոլորտներ 01 01 01 51 տողի 4269 սյունյակում ներկայացնել 100000 (մեկ հարյուր հազար) դրամ:

2) 01 01 01 51 տողի ընդամենը սյունյակի «24635.0» թվի փոխարեն կարդալ «24735.0» թիվը:

3. Ֆոնդային բյուջեի եկամտային մասում 3-րդ կետով ավելացնել 1000000 (մեկ միլիոն) դրամ և 3-րդ կետը կարդալ հետևյալ կերպ.

«3. վարչական բյուջեից/պահուստային ֆոնդից/ կատարվող հատկացումներ՝ 1000000դրամ»:

1) Ֆոնդային բյուջեի ընդամենը եկամուտներ տողի <<344247.1>> թվի փոխարեն կարդալ << 1344247.1>> թիվը:

2) Ֆոնդային բյուջե մուտք եղած 1000000 (մեկ միլիոն) դրամը ծախսային մասում ավելացնել այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածին հետևյալ կերպ.

ա) աղուսյակի 5129 տողի 01 01 01 51 սյունյակի «344247.1» թվի փոխարեն կարդալ «1344247.1» թիվը,

բ) աղյուսյակի ընդամենը տողում և ընդամենը սունյակում 344247.1 թվի փոխարեն կարդալ1344247.1 թիվը:

4. Որոշման մեջ «Հաստատել Դիմիտրով համայնքի 2021 թվականի բյուջեն, ընդամենը՝ 40460547.1 դրամ, որից՝ վարչական բյուջեն՝ 40116300 դրամ և ֆոնդային բյուջեն՝ 344247.1 դրամ» բառակապակցությունը փոխարինել «Հաստատել Դիմիտրով համայնքի 2021 թվականի բյուջեն, ընդամենը՝ 40460547.1 դրամ, որից՝ վարչական բյուջեն՝ 39116300 դրամ և ֆոնդային բյուջեն՝ 1344247.1 դրամ» բառակապակցությամբ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ**